

#### 3.5.4. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՒՄԲ

Չետազոտության գլխավոր համակցության նկատմամբ գնահատված արդյունքներով, ՀՀ-ում գրանցված կուսակցությունների 2001թ. դրամական միջոցների մուտքերը կազմել են 191.7 մլն. դրամ, հաշվեգրված ելքերը՝ 186.5 մլն. դրամ, իսկ փաստացի ելքերը՝ 185.0 մլն. դրամ:

Կուսակցությունների 2001թ. դրամական միջոցների մուտքերում, ի տարբերություն հետազոտությամբ առանձնացված մյուս խմբերի, գերակշռում են ոչ թե անդամավճարները, նվիրատվությունները և այլ անհատույց մուտքերը, որոնք կազմել են ընդամենը մուտքերի 36.9%-ը, այլ պետական բյուջեից և արտաբյուջետային հիմնադրամներից մուտքերը, որոնք, ըստ գնահատված արդյունքների, կազմել են 90.9 մլն. դրամ կամ կուսակցությունների ընդամենը մուտքերի 47.4%-ը: Բացի այդ, ընդամենը մուտքերի 15.2%-ը (կամ 29.2 մլն. դրամ) ստացվել է ապրանքների, արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների վաճառքից: Այստեղ առկա չեն մուտքեր արտասահմանից, իսկ անդամավճարների, նվիրատվությունների և այլ անհատույց մուտքերի 73.8%-ը ստացվել է կազմակերպություններից:

Կուսակցությունների 2001թ. դրամական միջոցների ելքերում գերակշռում են ընթացիկ ծախսերը, որոնք, ըստ հաշվեգրման, կազմում են 163.9 մլն. դրամ կամ ընդամենը հաշվեգրված ելքերի 87.9%-ը, իսկ ըստ փաստացի իրականացման՝ 162.4 մլն. դրամ կամ ընդամենը փաստացի ելքերի 87.8%-ը: Հաշվեգրված ընթացիկ ծախսերում 34.7% կամ 56.8 մլն. դրամ են կազմել այլ կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց կատարված վճարումները (փաստացի ելքերում 55.8 մլն. դրամ կամ համապատասխանաբար 34.3%): Այլ ընթացիկ ծախսերն, ըստ հաշվեգրման, կազմել են ընթացիկ ծախսերում 31.9% (փաստացի ընթացիկ ծախսերում 32.3%), իսկ ընդամենը մուտքերում համապատասխանաբար՝ 28.0% և 28.3%:

Չետազոտության գլխավոր համակցության նկատմամբ գնահատված արդյունքներով, կուսակցությունների 2001թ. դրամական միջոցների մուտքերը, դրանց փաստացի և հաշվեգրված ելքերն, ըստ առանձին ուղղությունների, բերված են աղյուսակներ 11 և 12-ում:

Կուսակցությունների 2001թ. դրամական մուտքերն, ըստ առանձին ուղղությունների՝  
զննահատված հետազոտության արդյունքներով

Ցուցանիշի անվանումը	հազ. դրամ	տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ
Անդամավճարներ, հովանավորչական նվիրատվություններ, հունանիտար օգնություն և այլ անհատույց մուտքեր	70 644	36.85%
Այդ թվում՝ բնակչությունից	18 486	9.64%
արտասահմանից	0	0.00%
կազմակերպություններից	52 158	27.21%
Մուտքեր պետական բյուջեից և արտաբյուջետային հիմնադրամներից	90 872	47.40%
Մուտքեր ապրանքների, արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների վաճառքից	29 185	15.22%
Որից՝ բնակչությանը մատուցված վճարովի ծառայություններից	0	0.00%
Հիմնական միջոցների վարձակալության դիմաց ստացած եկամուտներ (առանց ԱԱՀ)	183	0.10%
Հիմնական միջոցների վաճառքից և վերագնահատումից ստացված եկամուտներ	0	0.00%
Շահաբաժիններ, տոկոսներ և ֆինանսական գործունեությունից եկամուտներ	0	0.00%
Այլ գործառնական և ոչ գործառնական եկամուտներ	0	0.00%
Վարկեր, փոխառություններ	349	0.18%
Այլ մուտքեր	470	0.25%
<b>Ընդամենը մուտքեր</b>	<b>191 703</b>	<b>100.00%</b>

Կուսակցությունների 2001թ. դրամական ելքերն (փաստացի և հաշվեգրված),  
ըստ առանձին ուղղությունների՝ զննահատված հետազոտության արդյունքներով

Ցուցանիշի անվանումը	փաստացի		հաշվեգրված	
	հազ. դրամ	տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ	հազ. դրամ	տոկոսով տվյալ խմբի ընդամենի նկատմամբ
Ընթացիկ ծախսեր, ընդամենը	162 402	87.78%	163 902	87.88%
Այդ թվում՝ Նյութական ծախսեր	29 122	15.74%	29 122	15.61%
Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներ	9 567	5.17%	9 567	5.13%

Սոցիալական ապահովագրության և ապահովության վճարներ	2 799	1.51%	2 799	1.50%
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումներ	-	-	527	0.28%
Վարձակալության դիմաց կատարված վճարումներ	12 723	6.88%	12 739	6.83%
Վճարումներ այլ կազմակերպու- թյունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց	55 766	30.14%	56 816	30.46%
Այլ ընթացիկ ծախսեր	52 426	28.34%	52 333	28.06%
Ներդրումներ, ուղղված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերմանը	9 605	5.19%	9 605	5.15%
Կապիտալ նորոգմանն ուղղված ծախսեր	0	0.00%	0	0.00%
Նպաստներ և նյութական օգնություն բնեղեն արտահայտությամբ	0	0.00%	0	0.00%
Նպաստներ և նյութական օգնություն դրամական արտահայտությամբ	7 726	4.18%	7 726	4.14%
Կորուստներ և դուրս գրումներ	0	0.00%	0	0.00%
Պարտքի հիմնական գումարի և վարկերի ու փոխառությունների տոկոսների մարում	4 975	2.69%	4 975	2.67%
Բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերում, մուծումներ կանոնադրական կապիտալում և փայտափրական մուծումներ	0	0.00%	0	0.00%
Այլ գործառնական և ոչ գործառնական ծախսեր	300	0.16%	300	0.16%
<b>Ընդամենը ելքեր</b>	<b>185 008</b>	<b>100.00%</b>	<b>186 508</b>	<b>100.00%</b>